

Մինչեւ մեջքն իր՝ տիղմին մեջ
 Ուրիշներուն դըղեակ շինող ամբոխն է՝
 Որ ոտքի միակ մոլեգնադռոյթ ոստումով
 Նոյն իր խորունկ գերեզմանին քարին վրայ
 Ահաւասիկ կը կանգնի:
 Եւ մարդկային ովկիանն այդ փըրփրագոռ
 Կ'եռայ խորքերն իր մըռայլ.
 Եւ ալիքներն յառաջ կ'երթան մահադող.
 Եւ կը թըքեն իրենց փըրփուրը յորձքի
 Պալատներուն մինչեւ քիւներն, ու մինչեւ
 Ճակատն արփույն անտարբեր:
 Զըրջաւոր՝ են, ահաւոր՝ են, բայց այսօր
 Յանճարներու, դարերու
 Ամբողջ մտածումն, ամբողջ վաստակը խըմող
 Գաղափարին արծիւի թենն ըսպիտակ
 Եկաւ դըպչիլ անոնց դեռ կոյս ճակատին:
 Եւ անոք ուղիս ճամբարներէ հաւաքուած՝
 Այսօր ունին վըսեմութիւնն ովկիանի.
 Եւ կը մռնչեն, կը հայիոյեն, կ'աղօթեն,
 Կը հայիոյեն վերըստին:
 Կը մըրմըռան բըռնութեան դեմ ծուփ առ ծուփ.
 -Վըրե՛ժ, վըրե՛ժ, Նեմեսի՛ս:

Եւ Նեմեսիսն հո՛ն է, հո՛ն է միսիթարիչ
 Քենն երկնային, ձիւնափարփառ մարմինն իր
 Լուսնակին պես ալիքներն այդ կը քաշէ
 Դեպի ծոցն իր մայրենի:
 Եւ ժողովուրդն արձանին շուրջ կը դիզուի
 Յետք հետքի վրայ, խուռնախիտ,
 Եւ կըզակներ կըռթընցըլած ուսերու:
 Առջեւը վեհ Դիցուհւոյն